ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՏՎԿ-ԳՀԸ-05/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան, Կառավարական տուն 1,
մասնաշենք 4

«19» մայիսի 2017թ.
ժ. 12.00

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ Լ. Բալդարյանի
Հանձնաժողովի անդամներ Գ. Ճաղարյանի
Ա. Եղիշյանի

Ընթացակարգի հանձնաժողովի վերսկսված նիստում արձանագրվեց.

«ՏՎԿ-ԳՀԸ-05/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել սույն թվականի մայիսի 17-ին, ժամը՝ 15.00-ին:

Ընթացակարգի թվով չորս չափաբաժիններում մասնակցության հայտ են ներկայացրել մեկական մասնակից, որոնք են.
1-ին չափաբաժնում՝ «Գեղամա Մեդիա Հոլդինգ» Ընկերությունը,
2-րդ չափաբաժնում՝ «Ֆորտունա» ՍՊԸ-ն,
3-րդ չափաբաժնում՝ «Ցայգ» ՍՊԸ-ն,
4-րդ չափաբաժնում՝ «Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ-ն:
Նախքան մասնակիցների ներկայացրած ծրարների բացումը հանձնաժողովի նախագահը հրապարակել է յուրաքանչյուր չափաբաժնում ձեռք բերվող ծառայությունների նախահաշվային գինը, որը յուրաքանչյուր չափաբաժնում սահմանված է եղել 1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Նիստի ընթացքում արձանագրվել է, որ մասնակիցների ներկայացրած ծրարները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Ծրարում պարունակվող փաստաթղթերը ևս համապատասխանում են հրավերով ներկայացված ոչ գնային պահանջներին:

Թվով չորս չափաբաժիններում մասնակիցներից յուրաքանչյուրի ներկայացրած գնային առաջարկները գնման ենթակա ծառայությունների նախահաշվային գնի հետ համեմատելիս, հանձնաժողովն արձանագրել է, որ 1-ին չափաբաժնում ընթացակարգի միակ մասնակից «Գեղամա Մեդիա հոլդինգ» Ընկերության կողմից ԱԱՀ-ն չներառող 1230000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկը գերազանցում է ընթացակարգի ՊՍ կողմից սահմանած ծառայության նախահաշվային գինը:

2-րդ չափաբաժնում մասնակցության հայտ ներկայացրած «Ֆորտունա» ՍՊԸ-ի գնային առաջարկը առանց ԱԱՀ-ի կազմել է 1396500 ՀՀ դրամ, որը ևս գերազանցում է ընթացակարգի ՊՍ կողմից սահմանած ծառայության նախահաշվային գինը:
3-րդ չափաբաժնում մասնակցության հայտ ներկայացրած «Ցայգ» ՍՊԸ-ի գնային առաջարկը առանց ԱԱՀ-ի կազմել է 1188000 ՀՀ դրամ, որը չի գերազանցում ընթացակարգի ՊՍ կողմից սահմանած ծառայության նախահաշվային գինը:

4-րդ չափաբաժնում մասնակցության հայտ ներկայացրած «Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ-ի գնային առաջարկը առանց ԱԱՀ-ի կազմել է 1260000 ՀՀ դրամ, որը գերազանցում է ընթացակարգի ՊՍ կողմից սահմանած ծառայության նախահաշվային գինը:
Նման պայմաններում հանձնաժողովը որոշեց ղեկավարվել «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կառավարության 168-ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով և կասեցնել գնային հայտերի բացման նիստը: Էլեկտրոնային եղանակով թվով երեք մասնակիցներին՝ «Գեղամա Մեդիա հոլդինգ» Ընկերությանը, «Ֆորտունա» ՍՊԸ-ին և «Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ-ին հրավիրել գնային առաջարկների նվազեցման բանակցությունների:
Նույն օրը՝ ժամը 17.28 րոպեին թվով երեք մասնակիցները հրավիրվել են բանակցությունների, էլեկտրոնային եղանակով ծանուցվելով դրա վարման ժամանակի և վայրի մասին:
Ըստ այդմ բանակցությունները մեկնարկվել են սույն թվականի մայիսի 18-ին, ժամը 16.00-ին, Պատվիրատուի գտնվելու վայրում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 1, մասնաշենք 4, սենյակ 2 հասցեում, որին ներկա էին «Գեղամա Մեդիա Հոլդինգ» Ընկերության, «Ֆորտունա» ՍՊԸ-ի և «Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ-ի ներկայացուցիչները:
Նիստի ընթացքում մասնակիցները համաձայնեցին նվազեցնել իրենց կողմից ներկայացրած գնային առաջարկները և դրանք համապատասխանեցնել ծառայությունների գնման համար ընթացակարգի ՊՍ կողմից յուրաքանչյուր չափաբաժնում ձեռք բերվող ծառայությունների համար սահմանած նախահաշվային գնին: Ծառայությունների գնի վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունն արտացոլվել է բանակցությունների վարման նիստի արձանագրությունում, որը կնիքով հաստատել են բանակցությունների հրավիրված մասնակիցների ներկայացուցիչները:

Այսպիսով, կասեցված նիստի աշխատանքները վերսկսած «ՏՎԿ-ԳՀԸ-05/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը միաձայն որոշեց.
1-ին չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Գեղամա Մեդիա Հոլդինգ» Ընկերությանը՝ նվազեցված 1000000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ-ի/ գնային առաջարկով,
2-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆորտունա» ՍՊԸ-ին՝ նվազեցված 1200000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/ գնային առաջարկով,
3-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տայգ» ՍՊԸ-ին՝ 1188000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ-ի/ գնային առաջարկով,
4-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Զագեձոր» հեռուստաընկերություն ՍՊԸ-ին՝ նվազեցված 1000000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ-ի/ գնային առաջարկով:

ողունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ Լ. Բալդարյան
Հանձնաժողովի անդամներ Գ. Ճաղարյան
Ա. Եղիշյան